

ԻՆՉՊԵ՛Ս ԲՈՒԺԵԼ ԾԱԶԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԸ

ԻՆՉ Ե ԾԱԶԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԸ

Շաքարային դիաբետը քրոնիկ հիվանդություն է, որը բնորոշվում է հիպերգլիկեմիայով՝ արյան գլյուկոզայի բարձրացումով: Այն առաջանում է ինսուլինի արտազատման խանգարման և/կամ ինսուլինի ազդեցության խանգարման հետևանքով:

Ինսուլինը հորմոն է, որն արտադրվում է ենթաստամոքսային գեղձի, այսպես կոչված "Լանգերհանսյան կղզյակների" բետտա-բջիջներում: Ինսուլինի ոչ լիարժեք արտազատումը և/կամ ինսուլինի անբավարար ազդեցությունը թիրախ-հյուսվածքների վրա առաջացնում է ածխաջրատային, ճարպային և սպիտակուցային փոխանակության խանգարումներ:



Շաքարային դիաբետ տիպ 1-ի միակ բուժումը ինսուլինաթերապիան է: Այն իրականացվում է ենթամաշկային ներարկումների ձևով:

Ինսուլինաթերապիայի ժամանակ խորհուրդ է տրվում՝

- 1. օրը 6-8 անգամ չափել գլյուկոզան արյան մեջ,
- 2. հաշվել սննդում ածխաջրատների քանակը,
- 3. հաշվի առնել ֆիզիկական ակտիվությունը:

ԻՆՉՊԻՍԻ՛Ր ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ ԾԱԶԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Չկումպենսացված շաքարային դիաբետի հետևանքով առաջանում են սուր և քրոնիկ բարդություններ:

Սուր բարդություններից է հիպոգլիկեմիան (գլյուկոզայի նորմայից ցածր մակարդակ), ընդհուպ մինչև հիպոգլիկեմիկ կոմա:

Քրոնիկ բարդություններից են՝

- 1. Երկկամների ախտահարում (նեֆրոպաթիա),
- 2. Աչքերի ցանցթաղանթի ախտահարում (ռետինոպաթիա),
- 3. Սիրտ-անոթային հիվանդություններ,
- 4. Ծայրամասային անոթների և նյարդերի ախտահարում:

Շաքարային դիաբետի բարդություններից խուսափելու համար անհրաժեշտ է՝

- 1. Արյան գլյուկոզայի մակարդակը պահել նորմայի սահմաններում:
- 2. Դինամիկ հսկողություն էնդոկրինոլոգի կողմից:



ԾԱԶԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԾԱԶԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԻ ԻՆՉ ՏԵՍԱԿՆԵՐ ԿԱՆ

1 ՏԻՊ 1 Այս ժամանակ տեղի է ունենում բետտա-բջիջների աուտոիմուն ախտահարում, որի հետևանքով ինսուլինի արտադրությունը օրգանիզմում արակտիկորեն բացակայում է: Առավել բնորոշ է երեխաներին: Բուժումը՝ ինսուլինաթերապիա:

2 ՏԻՊ 2 Այս ժամանակ խանգարված է ինսուլինի ազդեցությունը և/կամ սեկրեցիան: Առավել բնորոշ է մեծահասակներին: Բուժումը՝ շաքար իջեցնող հաբեր:

ՈՐ ԱՆՏԱՆԻՇՆԵՐԻ ԴԵՊՋՈՒՄ ԴԻՍԵԼ ԲԺՇԿԻ

- Արտահայտված ընդհանուր թուլություն,
- Քաշի կտրուկ կորուստ,
- Ծարավի անհագ զգացում,
- Շատախմություն,
- Հաճախամիզություն:



Այս բոլոր գանգատների դեպքում խորհուրդ է տրվում որոշել գլյուկոզան արյան մեջ:

